# 2022-2023 ուստարի

# ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի դասվարի աշխատանքային հաշվետվություն

## Դասվար՝ Ա. Առաքելյան

Կրթադաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1.Կրթական

- Առաջնորդվելով ԿԳՍՄՆ նախարարության հաստատած չափորոշչային պահանջներով, ստեղծել եմ տարեկան թեմատիկ պլաններ բոլոր առարկաներից և ներկայացրել հաստատման:
- Տարվա կտրվածքով նախատեսված բոլոր միջոցառումներն ու տեսադասերը:
- Թեմատիկ պլանով նախատեսված թեմաները լիարժեք ուսուցանվել են: Տոնական և հիշատակի օրերի բացթողումները խտացվել և ուսուցանվել են կիսամյակների ընթացքում:
- Ճանաչում են իրեն շրջապատող միջավայրը, կարող են ներկայացնել իրենց: Զարգացել է բանավոր և գրավոր խոսքը:
- Ուստարվա ընթացքում փորձի փոխանակման նպատակով կատարվել են փոխադարձ դասալսումներ, վերլուծվել դրանք:
- Լրացուցիչ աշխատանքներ են տարվել ետ մնացող աշակերտների հետ: Լրացուցիչ աշխատանքներ են տրվել նաև լավ սովորող աշակերտներին:
- Բոլոր առարկաներից ծրագրերը կատարված են: Տրվել է ամառային հանձնարարություն:
- Նախատեսված բոլոր թեմատիկ և գործնական աշխատանքները տրվել են ժամանակին /մայրենիից և մաթեմատիկայից իննական թեմ., երկուական գործնական, ես և շրջակայից երկու թեմատիկ, երկու գործնական աշխատանքներ/:

2. Դաստիարակչական

- Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծել եմ բարենպաստ պայմաններ, միջավայր, համապատասխան կահավորում:
- Սովորեցրել եմ փոխհամագործակցություն և փոխօգնություն:
- Աշակերտների մեջ խորացրել եմ սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ: Սերմանել եմ աշխատասիրություն,պարտաճանաչություն և պատասխանատվության զգացում ,բարեխիղճ և հոգատար վերաբերմունք դպրոցի գույքի,դասագրքերի նկատմամբ:
- Սովորեցրել եմ գնահատել սեփական արարքները, նկատել իրենց և ընկերների թերությունները, ժամանակին շտկել դրանք:
- Դաստիարակել եմ հարգանք մեծերի նկատմամբ, ուշադրություն՝ փոքրերի նկատմամբ:
- Կարևորել եմ անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Ձևավորել եմ բարոյական արժեքներ, որոնք պետք է դառնան աշակերտների հետագա ուսումնառության և վարքի հիմքը: Ծանոթացրել եմ հայ և արտասահմանյան հանճարեղ մարդկանց կյանքին, նրանց գործունեությանը, կատարած սխրանքներին:
- Ձևավորել հայրենասեր, կրթված, ընկերասեր անհատներ: